

Սարգսի կենսագիրը Նուրտինեան վ. յառաջ կը բերէ հետեւեալ հրատարակութիւնները՝

1. Ներածումն առ ջերմեռանդ կեան Ս. Փրանչիսկոսի Սալեզացւոյ:

2. Ճմարտութիւն յաւիտենական:

3. Գիրք օրինակաց եւ նմանութեանց: Ասոր տպագրութեան ծախքը Սահակ Ահապին Զմիւռնիոյ Առաջնորդը խոստացած էր տալ սակայն հրատարակուելէն ետեւ մերժած էր հատուցանել: Վերի նամակին մէջ «Գիրք կենդանեաց» կոչուածն այս գիրքն է:

4. Մովս. Խորենացւոյ Պատմութիւն եւ Աշխարհացոյց:

5. Վարք Ս. Յովհ. Ոսկեբերանի:

6, 7. Մեծ եւ փոքր Էֆիմէրտէ, որուն վրայ իր կողմանէ Յաւելուածներ ըրաւ:

8. Կրթութիւն Ապաշխարութեան, զոր ինքը թարգմանեց իտալերէնէ:

9. Ուրիշ պէսպէս տետրակներ.

10. Կտակագրութիւն:

Վերջիններուն վրայ իր անունը դրած չէ:

Սոյն հրատարակութիւնները, ինչպէս նաեւ հոս չյիշուածներ, աչքէ անցուցի, եւ իրենց հրատարակութեան ժամանակին կարգաւ մանրամասն յառաջ կը բերեմ:

1. «Ներ-ձո-մն -- ջերմ-անդ կեան: Սրբոյն Փրանչիսկոսի Սալեզացւոյ: Թարգմանեցեալ ի Տալիականէ ի Հայս, ի Ղուկասու Ա. Է Խարբերացւոյ: Յարմարագրեցեալ եւ Տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի Սարգսէ Արքեպիսկոպոսէ Կոստանդնուպոլսեցւոյ: Ի Հայրապետութեան Տեառն Ղա-